

**ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ
Կանխարգելման պատասխանատվության կիրառման
խնդիրներն ու հնարավորությունները**

ԼԻԼԻԹ ՄՈՒՐԱՂՅԱՆ

Բյուրուսի անվան պետական համալսարան

Միջազգային հանրությունը բազմիցս բախվել է ժողովուրդների իրավունքների կոպիտ ոտնահարումների՝ զանգվածային վայրագությունների, բռնությունների, էթնիկ զտումների, ցեղասպանության դեպքերի: Նման ոտնահարումներից և միջազգային անվտանգությանը սպառնացող մարտահրավերներից խուսափելու նպատակով մարդասիրական միջամտության կիրառման բազմաթիվ դեպքերը երբևէ միանշանակ չեն ընդունվել միջազգային հանրության կողմից: Մոտեցումների տարբերությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ մարդասիրական միջամտությունը մշտապես դիտարկվել է ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման, պետությունների ներքին իրավասությանն առնչվող հարցերին չմիջամտելու և պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքներին զուգահեռ: Մտեղծված խոչընդոտները հաղթահարելու նպատակով Պետական ինքնիշխանության և միջամտության հարցերով միջազգային հանձնաժողովի զեկույցով առաջ քաշվեց նոր՝ պաշտպանելու պատասխանատվություն (ՊՊ) հասկացությունը որպես երեք՝ կանխարգելման, արձագանքման և վերականգնման պատասխանատվությունների ամբողջություն: Չնայած պաշտպանելու պատասխանատվությամբ ընդհուպ մինչև ռազմական միջամտության իրականացման համար իրավական հիմքեր ստեղծելու փորձին՝ միջազգային հարաբերություններում մարդու իրավունքների պաշտպանության քողի ներքո այլ նպատակներ հետապնդող միջամտության դեպքերը մատնում են գործընթացի ոչ լիարժեք լինելու հանգամանքն ու իրավական հիմքերի թերությունները: Կանխարգելման պատասխանատվությունը ենթադրում է հնարավոր բոլոր ջանքերի գործադրում ճգնաժամը վաղ փուլում կանխելու համար: Սակայն փորձը ցույց է տալիս, որ այս փուլում պետությունները հաճախ ձախողվում են: Այս մասին վկայում են վերոնշյալ ոտնահարումների, անվտանգության սպառնալիքների,

հակամարտությունների չպակասող դրսևորումները: Դա թույլ է տալիս ենթադրել, որ կանխարգելման պատասխանատվությունը լիրաժեք չի իրականացվում կամ մշտապես չէ, որ ծառայում է իր նպատակին: Հողվածում ուսումնասիրվում է կանխարգելման պատասխանատվության կիրառման հնարավորություններն ու խոչընդոտները, դրանց հնարավոր պատճառները:

Բանալի բառեր

Պաշտպանելու պատասխանատվություն, կանխարգելման պատասխանատվություն, ժողովուրդների և մարդու իրավունքներ, վաղ նախագուշացում, կանխարգելող միջոցների գործիքակազմ, քաղաքական կամք

Նախաբան

«Մարդասիրական միջամտություն» հասկացության իրավական հիմքերի շուրջ քննարկումներն ու բանավեճերը հատկապես ակտիվացան Կոսովոյում¹ ՆԱՏՕ-ի իրականացրած գործողություններից հետո: Պետական ինքնիշխանության և միջամտության հարցերով միջազգային հանձնաժողովը (ՊԻՄՄՀ) գեկույցով անդրադարձավ մարդասիրական միջամտության իրավունքին²՝ փորձելով հիմնավորել մարդու իրավունքների պաշտպանության նպատակով համապատասխան միջոցների՝ ընդհուպ մինչև ռազմական գործողությունների իրականացումը միջազգային հարաբերություններում նոր հասկացության՝ «պաշտպանելու պատասխանատվության» (Responsibility to protect) շրջանակներում: «Մարդասիրական միջամտություն» ավանդական իմաստը մարդասիրական նպատակով հարկադիր ռազմական միջամտությունն է: Մինչդեռ պաշտպանելու պատասխանատվությունն ավելին է, քան

¹ Security Council Resolution № 1244, 1999, <https://peacemaker.un.org/kosovo-resolution1244> (31.03.2021)

²The Responsibility to Protect, Report of the International Commission on Intervention and State Sovereignty(ICISS), Ottawa, 2001, p.VII, <http://responsibilitytoprotect.org/ICISS%20Report.pdf> (31.03.2021).

դա³: Պաշտպանելու պատասխանատվության կարևորությունն ու առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ նախ և առաջ զեկույցի շրջանակում պետության ինքնիշխանությունը այլևս դիտարկվում էր ոչ թե որպես իշխանություն, այլ պատասխանատվություն⁴: Սկզբունքի հեղինակի դիտարկմամբ, այն ենթադրում է երկակի պատասխանատվություն. արտաքին՝ հարգել այլ պետությունների ինքնիշխանությունը, և ներքին՝ հարգել պետության տարածքում բոլոր մարդկանց արժանապատվությունը և հիմնական իրավունքները⁵: Հետևաբար, սեփական բնակչության պաշտպանությունն առաջին հերթին պետության պատասխանատվությունն է, իսկ միջազգային հանրության կողմից պաշտպանելու պատասխանատվության իրականացումը թույլատրելի է միայն այն դեպքում, երբ թիրախային պետությունը ի վիճակի չէ կամ չի ցանկանում պաշտպանել իր բնակչությանը⁶: Մյուս առանձնահատկությունը՝ «պաշտպանելու պատասխանատվությունը» որպես հատուկ պատասխանատվությունների (կանխարգելման, արձագանքման և վերակառուցման⁷) ամբողջություն ներկայացումն էր:

Հատկանշական է, որ թեև ՊԻՄՄՀ զեկույցն ընդգծում է կանխարգելման պատասխանատվության առաջնահերթությունը, քաղաքագիտական ուսումնասիրությունները կենտրոնացած են հիմնականում մյուս երկու, և առավելապես՝ արձագանքման պատասխանատվության ուսումնասիրության վրա: Նման փաստաթղթի առկայության պայմաններում անգամ միջազգային հանրության ոչ միանշանակ արձագանքը ՊՊ իրականացման, և մասնավորապես՝ ռազմական միջամտության դեպքերին, հավանաբար, պայմանավորված է տրամաբանական հարցադրմամբ է՝ արդյոք կանխարգելման պատասխանատվությամբ հնարավոր է

³ **Evans G.**, The Responsibility to Protect: Ending Mass Atrocity Crimes Once and For All, *Brookings Institution Press*, 2009.

⁴ The Responsibility to Protect, նշվ. աշխ., էջ XI.

⁵ **Evans G., Sahnoun M.**, Responsibility to Protect, *Foreign Affairs*, **81**, 6, 2002, 99-110.

⁶ The Responsibility to Protect, նշվ. աշխ., էջ XI.

⁷ Նույն տեղում:

լիարժեք լուծում տալ խնդրին՝ խուսափելով արձագանքման պատասխանատվությանը, և հատկապես ռազմական միջամտությանն անցնելու անհրաժեշտությունից, թե՛ միջամտող կողմի շահագրգռվածության դեպքում հնարավոր է ստեղծված իրավիճակն արհեստականորեն անլուծելի դարձնել, որպեսզի արձագանքման պատասխանատվության կարիք լինի: Այս տեսանկյունից էլ կարևորվում է կանխարգելման պատասխանատվության ուսումնասիրությունը:

Պաշտպանելու պատասխանատվություն

Միջազգային հարաբերություններում «պաշտպանելու պատասխանատվության» ներդրման համար հիմք հանդիսացան մարդկանց իրավունքների ու ազատությունների ոտնահարման, լայնամասշտաբ բռնության դեպքերի կանխման նպատակով կամ պատրվակով միջամտությունների իրականացման մարդասիրական բնույթի, իրավական հիմքերի վերաբերյալ մոտեցումների տարբերությունները և հատկապես 1999թ.-ին Կոսովոյում ՆԱՏՕ-ի գործողությունների պատճառով առավել ակտիվացած բանավեճերը:

2001 թվականին ՊԻՄՄՀ-ն՝ ի պատասխան ՄԱԿ ԱԽ գլխավոր քարտուղար Քոֆի Անանի՝ մարդու իրավունքների կոպիտ ու համակարգված խախտման դեպքերին արձագանքման գործընթացի և սկզբունքի հիմնական հարցերի վերաբերյալ «միասնականության հասնելու» անհրաժեշտության մասին դեռևս 1999թ., ապա՝ 2000թ. հնչեցրած կոչին⁸, զեկույցով առաջադրեց նոր մոտեցում: Զեկույցի համաձայն, մարդկանց պաշտպանության հիմքեր ունեցող միջամտության այդ նոր մոտեցումը պետք է ունենար առնվազն 4 հիմնական նպատակ⁹

⁸ The Responsibility to Protect, նշվ. աշխ, էջ VII.

⁹ The Responsibility to Protect, նշվ. աշխ, էջ 11.

- ստեղծել հստակ կանոններ, ընթացակարգեր և չափանիշներ՝ որոշելու համար միջամտության իրականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև երբ և ինչպես այն իրականացնել,
- օրինականացնել ռազմական միջամտությունը՝ երբ անհրաժեշտ է, և երբ բոլոր մյուս մոտեցումները ձախողվել են,
- երաշխավորել, որ ռազմական միջամտությունը, երբ այն տեղի է ունենում, իրականացվում է միայն ներկայացված նպատակներով, արդյունավետ է և իրականացվում է մարդկային կորուստների և ինստիտուցիոնալ վնասների նվազեցման նպատակով,
- աջակցել հակամարտության պատճառների վերացմանը՝ միաժամանակ ավելացնելով երկարատև և կայուն խաղաղության հեռանկարները:

Հիմնվելով վերոնշյալ նպատակների վրա՝ զեկույցում «պաշտպանելու պատասխանատվությունը» ներկայացվում է որպես երեք հատուկ պատասխանատվություններ¹⁰՝

- *Կանխարգելման պատասխանատվություն*՝ բնակչությանը վտանգող ներքին կոնֆլիկտների արմատական, ինչպես նաև անմիջական պատճառների և մարդածին այլ ճգնաժամերի կարգավորում,
- *Արձագանքման պատասխանատվություն*՝ մարդկային կարիքից բխող իրավիճակների արձագանքում հարկադրանքի այնպիսի միջոցներով, ինչպիսիք են պատժամիջոցները և միջազգային հետապնդումը, և, ծայրահեղ դեպքում՝ ռազմական միջամտությունը,
- *Վերակառուցման պատասխանատվություն*՝ մասնավորապես, ռազմական միջամտությունից հետո ապահովել լիակատար աջակցություն վերականգնմանը, վերակառուցմանը և հաշտեցմանը՝ վերացնելու համար այն վնասի պատճառները, որոնք միջամտությունը կոչված է եղել դադարեցնել կամ կանխել:

¹⁰The Responsibility to Protect, նշվ. աշխ., էջ XI.

Եթե մարդասիրական միջամտության դեպքում միջազգային հանրությունը մարդու իրավունքների ոտնահարման դեպքերին արձագանքում էր ռազմական միջամտության, մարդասիրական օգնության կամ պատժամիջոցների տեսքով, երբ թիրախային պետությունն արդեն այդ միջամտության կարիքն ուներ, ապա պաշտպանելու պատասխանատվության դեպքում առանցքային կարևորություն է տրվում նախ կանխարգելմանը, ապա միայն ընդհուպ մինչև ռազմական միջամտությամբ արձագանքմանը: Պաշտպանելու պատասխանատվության դեպքում միջազգային հանրությունը պարտավորվում է նախ կանխարգելել մարդու իրավունքների կոպիտ ոտնահարման դեպքերը, հակամարտությունները, մարդածին աղետները, ապա նոր դիտարկել միջամտության տարբերակը, երբ դրա անհրաժեշտությունն առաջացել է՝ չնայած կանխարգելմանն ուղղված բոլոր քայլերին: Իսկ մարդասիրական միջամտության դեպքում միջազգային հանրությունն արձագանքում էր վերոնշյալ հանգամանքների ի հայտ գալուց հետո միայն:

2005թ. ՄԱԿ համաշխարհային գազաթաժողովին Գլխավոր Ասամբլեայի եզրափակիչ փաստաթղթով անդամ պետություններն ընդունեցին «պաշտպանելու պատասխանատվության» պարտավորությունը, որի հիմքում ընկած է¹¹

1. Յուրաքանչյուր պետության պատասխանատվությունը՝ պաշտպանել սեփական բնակչությանը ցեղասպանությունից, պատերազմական հանցագործություններից, էթնիկ զտումներից և մարդկության դեմ կատարվող այլ հանցագործություններից: Ընդ որում, միջազգային հանրությունը պետք է խրախուսի և աջակցի պետություններին՝ իրականացնելու այդ պատասխանատվությունը,
2. Միջազգային հանրության պատասխանատվությունը՝ Կանոնադրության VI և VIII գլուխներին համապատասխան,

¹¹ 2005 World Summit Outcome, Doc. A/RES/60/1, UN General Assembly, http://www.un.org/en/development/desa/population/migration/generalassembly/docs/globalcompact/A_RES_60_1.pdf (31.03.2021).

օգտագործել դիվանագիտական, մարդասիրական և այլ խաղաղ միջոցներ՝ բնակչությանը վերը նշված հանցագործություններից պաշտպանելու համար: Անհրաժեշտության դեպքում, երբ խաղաղ միջոցները բավարար չեն, իսկ ազգային իշխանություններն ակնհայտորեն ի վիճակի չեն վերոհիշյալ չորս հանցագործություններից պաշտպանել սեփական բնակչությանը, միջազգային հանրությունը՝ հաշվի առնելով հստակ հանգամանքները և համագործակցելով համապատասխան տարածաշրջանային կազմակերպությունների հետ, կարող է Անվտանգության Խորհրդի միջոցով ժամանակին և վճռականորեն ձեռնարկել հավաքական գործողություններ՝ ՄԱԿ կանոնադրությանը համապատասխան՝ այդ թվում VII գլխի հիման վրա:

Այսպիսով, «պաշտպանելու պատասխանատվությունը» սահմանում է երկակի պատասխանատվություն (պետության և միջազգային հանրության) և երեք պատասխանատվությունների ամբողջություն: ՊՊ-ն բավարար պատասխան չի տալիս այն առանցքային հարցին, թե ինչպե՞ս լավագույնս կանխել և, եթե կանխարգելումը ձախողվի, արձագանքել մարդու իրավունքների լայնածավալ խախտումներին և սպանություններին¹²: Թեև զեկույցում հիմնապայուններից առաջինին՝ կանխարգելման պատասխանատվությանը տրված առաջնահերթությանը, դրա վերաբերյալ հետագոտությունները նկատելիորեն զիջում են մյուս երկու պատասխանատվություններին նվիրված ուսումնասիրություններին:

Կանխարգելման պատասխանատվություն (ԿՊ)

Փորձը ցույց է տալիս, որ մարդու իրավունքների, ազատությունների պաշտպանության համար անգամ իրավական հիմքերի առկայության դեպքում միջազգային հանրությունը մինչև օրս շարունակում է բախվել նույն մարտահրավերներին: Թեև ՊԻՄՄԸ

¹² **Pingeot L., Obenland W.**, In whose name? A critical view on the Responsibility to Protect, Report, Global Policy Forum, 2014, p. 47.

զեկույցով կանխարգելման պատասխանությանը տրված առաջնահերթությանը՝ միջազգային պրակտիկայում քիչ չեն դեպքերը, երբ ՊՊ մյուս՝ արձագանքման պատասխանատվության (առավել մտահոգիչը՝ ռազմական միջամտության) իրականացման անհրաժեշտություն է առաջանում: Կարելի է ենթադրել, որ նման դեպքերում կանխարգելման պատասխանատվության իրականացումը չի տվել ակնկալվող արդյունքը, ուշացել է կամ ինչ-որ հանգամանքներով պայմանավորված՝ թերի է իրականացվել:

2001 թվականին ՊԻՄՄՀ ներկայացրած զեկույցով կանխարգելման պատասխանատվությանն առաջնահերթություն տրվեց մյուս երկու պատասխանատվությունների համեմատ: Կանխարգելման պատասխանատվության առավելությունը դաժան հանցագործությունները կանխելու և միջազգային ներգրավվածությունը նվազեցնելու միջոց լինելն է¹³: Դաժան հանցագործությունների կանխարգելման կարևորությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով.

- այն օրակարգային նշանակություն ունի տարածաշրջանային և միջազգային խաղաղության և կայունության համար,
- հնարավորություն է տալիս խուսափել մարդկային կյանքերի զգալի կորուստներից, ինչպես նաև ֆիզիկական, և հոգեբանական վնասներից,
- պակաս ծախսատար է, քան միջամտությունը կամ դրա հետևանքներով զբաղվելը,
- այդ հանցագործությունները կանխարգելելով և կատարելով իրենց պաշտպանելու առաջնային պատասխանատվությունը՝ պետություններն ամրապնդում են իրենց ինքնիշխանությունը և նվազեցնում այլ պետությունների կամ միջազգային դերակատարների արձագանքման անհրաժեշտությունը¹⁴:

¹³ Welsh J., The responsibility to prevent: Assessing the gap between rhetoric and reality, *Cooperation and Conflict*, vol 51(2), 2016, p. 217.

¹⁴ Framework of Analysis for Atrocity Crimes, A Tool For Prevention, United Nations, 2014, p. 2.

Ըստ զեկույցի, նախքան միջամտության իրականացումը կանխար-գելման տարբերակները միշտ պետք է սպառված լինեն¹⁵:

Զեկույցում հակամարտության, մարդկային տառապանքի այլ աղբյուրների արդյունավետ կանխարգելման համար առանձնացվում է երեք նախապայման.

- **վաղ նախազգուշացում**՝ տեղեկություն իրավիճակի փխրունության և գիտելիք՝ դրա հետ կապված ռիսկերի վերաբերյալ,
- **կանխարգելող միջոցների գործիքակազմ**՝ փոխըմբռնում քաղաքական այնպիսի հասանելի միջոցառումների (միջոցների) վերաբերյալ, որոնք ի գործ են փոխել իրավիճակը,
- **քաղաքական կամք**՝ այդ միջոցները կիրառելու պատրաստակամություն:¹⁶

Վաղ նախազգուշացում: Վերոնշյալ սպառնալիքների կանխարգելման տեսանկյունից առանձնակի նշանակություն ունի այդ սպառնալիքների մասին վաղ նախազգուշացումը: Վաղ նախազգուշացումը հումանիտար ճգնաժամում գտնվող երկրների մասին կառավարություններին տեղեկացնելու միջոց է՝ հաշվի առնելով հնարավոր հակամարտության, սննդամթերքի պակասի և հարակից այլ խնդիրներ¹⁷: Այն բաղկացած է տվյալների հավաքագրումից, ռիսկերի վերլուծությունից, առաջարկությունների մշակումից և շահագրգիռ կողմերին այդ ամենի մասին տեղեկություններ տրամադրելուց¹⁸: Վաղ նախազգուշացումը ենթադրում է քաղաքական անկայունության, սպառազինությունների հոսքի, էթնո-քաղաքական, բնապահպանական, ներպետական հակամարտությունների, ցեղասպանության, մարդու իրավունքների կոպիտ խախտման, պետության ձախողման, սննդի ճգնաժամի,

¹⁵ The Responsibility to Protect, նշվ. աշխ., էջ XI.

¹⁶ The Responsibility to Protect, նշվ. աշխ., էջ 20:

¹⁷ **Whittall J.**, Humanitarian Early Warning System: myth and reality, *Third World Quarterly*, Vol. 31, N. 8, 2010, pp 1237-1250.

¹⁸ **Haider H.**, Conflict: Topic Guide. Revised edition with B. Rohwerder, *GSDRC*, 2014, p 49, <http://www.gsdrc.org/docs/open/con69.pdf> (31.03.2021).

փախստականների հոսքի, ներքին տեղահանման հարցերի մշտադիտարկում¹⁹ և դրա հիման վրա հնարավոր սպառնալիքների մասին նախագուշացում:

Վաղ նախագուշացման համակարգը պետք է ներառի հետևյալ քայլերը.

- ռիսկերը հասկանալու համար տվյալների հավաքում,
- ռիսկի գնահատում,
- նախագուշացման փոխանցում (Transmission of Alert),
- Առաջարկներ (վաղ) արձագանքման համար,
- (Վաղ) արձագանքման մոնիտորինգ և գնահատում:²⁰

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը, պետությունների միջև տարբեր ոլորտներում համագործակցության ամրապնդմանը զուգահեռ որևէ իրադարձության մասին տեղեկությունը կարճ ժամանակահատվածում հասանելի է դառնում: Տրամաբանական է, որ որևէ խնդրի լիարժեք լուծման համար անհրաժեշտ է նախ տիրապետել համակարգված տեղեկությունների, ապա դրա վերլուծության արդյունքում փնտրել կարգավորման տարբերակներ: Տրամաբանական է նաև, որ տեղեկությանների ոչ լիարժեք լինելու պայմաններում հնարավոր չէ կայացնել ռացիոնալ որոշում: Վաղ նախագուշացման գործընթացում ոչ այնքան կարևոր է ինֆորմացիոն անսպառ հոսքը, շատ դերակատարների ներգրավվածությունը, որքան համակարգված տեղեկատվության ձեռք բերումը: Այդ է պատճառը, որ բազմաթիվ դերակատարների գործողությունների ոչ համակարգված բնույթով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել ստեղծել նոր կառույցներ, որոնց գործողություններն ուղղված են բացառապես հակամարտությունների վաղ նախագուշացմանը: Միջազգային ճգնաժամային խմբի (International Crisis Group) նման կազմակերպությունները վերահսկում և զեկուցում են հակամար-

¹⁹ **Davies J.**, Preventive Measures: Building Risk Assessment and Crisis Early Warning Systems, Rowman & Littlefield Publishers, 1998, p. 3.

²⁰ **Palli S.**, Early Warning Systems as a Conflict Prevention Tool: Recommendations for the Arab Region, United Nations, 2014, p. 9-10.

տուրքուն ունեցող այն տարածքների մասին, ուր կանխարգելիչ գործողություններ իրականացնելու անհրաժեշտություն կա: Նրանց աշխատանքը լրացվում է միջազգային և ազգային այնպիսի կազմակերպությունների զեկույցների և մոնիտորինգի միջոցով, որոնց գործունեության շրջանակը մարդու իրավունքների պաշտպանությունն է և որոնք ընդլայնել են իրենց աշխատանքը՝ ներառելով վաղ նախազգուշացումը հակամարտությունների մասին, որոնք կարող են հանգեցնել մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ նույնիսկ ցեղասպանության²¹: Որպես վաղ նախազգուշացումը կենտրոնացնելու տրամաբանական կետ հաճախ նշվում է ՄԱԿ-ի շտաբը:

Մշտադիտարկման արդյունքում ձեռք բերված տեղեկությունների վերլուծության հիման վրա մշակված գործողությունները պետք է իրականացնեն իրավասու կողմերը: Թվում է, թե գործընթացը բավական պարզ է, մինչդեռ կան մի շարք խոչընդոտներ, որոնք գործնականում կարող են բարդացնել ընթացքը և ազդեցություն ունենալ վաղ նախազգուշացման արդյունավետության վրա: Խոսքը քաղաքական բաղադրիչի առաջացրած հնարավոր դժվարությունների մասին է: Տեսականորեն կարելի է մի շարք սցենարներ դիտարկել, ուր կանխարգելման պատասխանատվության արդյունավետությունը պայմանավորված է քաղաքական բաղադրիչի առանձնահատկությամբ: Օրինակ, երբ որևէ պետություն չունենա ցանկություն կամ շահ տարածաշրջանում, կարող է և չձեռնարկել քայլեր՝ պատճառաբանելով տեղեկությունների պակասը կամ դրան ուշ տիրապետելու հանգամանքը: Վաղ նախազգուշացման համար տեղեկատվության մշակման ժամանակ անհրաժեշտ է ինֆորմացիա նաև անմիջապես թիրախային երկրի ներսից, բայց քանի որ այդ պետությունն ինքն է ոտնահարում իր տարածքում մարդկանց իրավունքներն ու ազատությունները՝ տրամաբանորեն կարող է խուսափել այդ տեղեկությունները տրամադրելուց: Հետևաբար մի շարք սպառնալիքների ի հայտ

²¹ The Responsibility to Protect, նշվ. աշխ., էջ 21.

գալուց հետո որոշ ժամանակ կպահանջվի՝ մինչև այդ մասին տեղեկությունները հասանելի լինեն գործելու իրավասություն ունեցող կողմերին: Ինքնիշխանության ոտնահարումը ևս կարող է որպես արդարացում օգտագործվել՝ որոշ գործողություններ իրականացնելուց խուսափելու համար: Վաղ նախագգուշացումը հաճախ ձախողվել է, քանի որ միջամտությունն այլ պետության գործերին հիմնված է ազգային շահերի և ինքնիշխանության սահմանափակումների վրա²²: Տարածաշրջանային դերակատարները, սովորաբար, ավելի լավ դիրքում են գտնվում՝ տեղական դինամիկան հասկանալու տեսակետից, սակայն դրանք հաճախ հետաքրքրված են հակամարտությունների արդյունքով²³: Ակնհայտ է, որ պետությունները և ոչ պետական կազմակերպությունները հաճախ տարբերվող շահեր ու օրակարգեր ունեն և որ հավանական աղետալի հակամարտության գոտիներում, ուր արտաքին դերակատարները էական շահեր ունեն (և, սովորաբար, ավելի քան մի քանի մրցակիցներ), կանխարգելման գործողությունների կոորդինացումը կարող է բարդ լինել: Սա տեղի դերակատարներին լավ հնարավորություն է տալիս օգտագործել արտաքին դերակատարների միջև եղած բաժանումները²⁴: Տարածաշրջանում կանխարգելման իրավասություն ունեցող տարբեր դերակատարների շահերի բախումը կարող է ռիսկային գոտում ստեղծված իրավիճակի ձգձգման պատճառ դառնալ: Քանի դեռ իրավասու կողմերը շահերի բախման հետևանքով չեն կարող ստեղծված իրավիճակում կարգավորման եզրեր գտնել՝ թիրախային տարածաշրջանում ճգնաժամը կարող է շարունակվել ու խորանալ: Մյուս կողմից, հնարավոր է իրավիճակ, երբ կանխարգելման իրավասություն ունեցող դերակատարը տարածաշրջանում չցանկանա դա անել, քանի որ կա՛մ իր շահերից բխի տարածաշրջանում իրավիճակի սրումն այնքան, որ ռազմական միջամտության կարիք լինի և վերջինս կարողանա իր ռազմական

²² Whittall J., նշվ. աշխ.:

²³ The Responsibility to Protect, նշվ. աշխ., էջ 22.

²⁴ The Responsibility to Protect, նշվ. աշխ., էջ 26.

ներկայությունն ապահովել այնտեղ, կա՛մ չունենա որևէ հետաքրքրություն ու ցանկություն՝ իր ռեսուրսներն այնտեղ ծախսելու: Մեկ այլ տարբերակ՝ պետությունը, որը ոտնահարում է իր բնակչության իրավունքները, կարող է և դրական չարձագանքել կողմերի կոչերին, շարունակել սպառնալիք լինել իր բնակչության համար՝ այդպիսով հարցականի տակ դնելով վաղ նախազգուշացման արդյունավետությունը: Թեև ՊԻՄՄՀ զեկույցում անգամ նշվում է, որ կանխարգելումն ակնհայտորեն շատ ավելի նախընտրելի է նրանց համար, ովքեր հակառակ դեպքում կտուժեն պատերազմի հետևանքներից, և ավելի քիչ ծախսատար է միջազգային հանրության համար, քան ռազմական գործողությունները, մարդասիրական շտապ օգնությունը կամ հակամարտությունից հետո վերակառուցումը²⁵, տարածաշրջանում իր ռազմական ներկայությունն ապահովել ցանկացող դերակատարը չի նախընտրի այս տարբերակը: Այս ամենը ոչ թե վաղ նախազգուշացման, այլ ավելի շուտ նախազգուշացման կամքի ձախողում է, որը բխում է ազգային պետության և ազգային շահերի քաղաքական նկատառումներից²⁶, այն ոչ թե վաղ նախազգուշացման տեխնիկական, այլ քաղաքական ձախողում է²⁷:

Վաղ և ոչ հարկադրական գործողություններն արժեքավոր են այն պատճառով, որ նաև կարող են բարձրացնել երրորդ կողմի ներգրավվածության ձևերի արդյունավետությունը²⁸: Ի վերջո մարտահրավերները վաղ փուլում հաղթահարելն ավելի հեշտ ու արդյունավետ է, քան հետագայում այդ մարտահրավերների հետևանքով ստեղծված ճգնաժամային իրավիճակի հաղթահարումը: Իրավական բաղադրիչի տեսանկյունից գուցե թվա, թե ամբողջ գործընթացը հստակեցված է, վաղ նախազգուշացմամբ

²⁵Report of the Panel on United Nations Peace Operations, A/55/305–S/2000/809, UN General Assembly, p. 5, <https://www.un.org/ruleoflaw/files/brahimi%20report%20peacekeeping.pdf> (31.03.2021)

²⁶ Whittall J., նշվ. աշխ.:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Welsh J., նշվ. աշխ.:

հնարավոր է կանխել մարդկությանը սպառնացող մի շարք մարտահրավերներ, մինչդեռ կոնկրետ տարածաշրջանում որոշ դերակատարների շահերի, հետաքրքրությունների առկայությունը կամ բացակայությունը կարող են առավել որոշիչ դեր խաղալ և ձախողել վաղ նախագուշացման արդյունավետությունը: Վաղ նախագուշացմանը նվիրված սակավաթիվ հետազոտությունները հիմնականում կենտրոնացած են այդ գործընթացի մեխանիզմների հստակեցման, վաղ նախագուշացման համար առավել արդյունավետ մեխանիզմների որոնման վրա, մինչդեռ քաղաքական կամքի բացակայության, շահերի բախումների պայմաններում առաջարկված որևէ մեխանիզմ չի կարող արդյունավետ գործել:

Կանխարգելող միջոցների գործիքակազմ: Վաղ նախագուշացման հաջողելու դեպքում հաջորդ առանցքային նշանակություն ունեցող քայլը ստեղծված իրավիճակում կանխարգելող միջոցների ճիշտ ընտրությունն է: Երբ վաղ նախագուշացման փուլում համակարգված ինֆորմացիայի հիման վրա իրավասու կողմերը որոշեն գործել՝ դա դեռ չի ենթադրի խնդրի կարգավորում: Առանձնակի նշանակություն ունի ճիշտ գործիքակազմի ընտրությունը, քանի որ, հակառակ դեպքում, հնարավոր են զարգացման անկանխատեսելի սցենարներ՝ բացասական հանգուցալուծմամբ: Ավելի շատ գիտելիք է անհրաժեշտ, որպեսզի հակամարտությունների կանխարգելման գործիքակազմի նկարագրությունից անցում կատարվի էմպիրիկորեն հիմնված կանխարգելման ռազմավարության օգտագործմանը²⁹: Լայն քաղաքական աջակցությունից և համապատասխան ինստիտուցիոնալ կարողությունից զատ, հակամարտությունների արդյունավետ կանխարգելումը պահանջում է գիտելիքներ այն մասին, թե *ե՞րբ*, *որտեղ* և *ինչպես* յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար մշակել և իրականացնել հարմարեցված ռազմավարություն: Ռազմավարական մակարդակում դա նշանակում է³⁰.

²⁹ **Woocher L.**, Preventing Violent Conflict, Assessing Progress, Meeting Challenges, United States Institute of Peace, Special Report 231, 2009, p. 1.

³⁰ **Woocher L.**, նշվ. աշխ., էջ 10.

1. իմանալ, թե երբ և որտեղ ներդնել հակամարտությունների կանխարգելման սահմանափակ ռեսուրսներ՝ հիմնված ռիսկերի և դրական ազդեցության ներուժի գնահատման վրա,
2. ունենալ գիտելիքներ այն մասին, թե հակամարտությունների կանխարգելման գործիքակազմում որ գործիքներն օգտագործվեն տարբեր իրավիճակներում և փուլերում, և ինչ համադրությամբ,
3. իմանալ, թե գործառնական մակարդակում ինչպես օգտագործել հակամարտությունների կանխարգելման տարբեր գործիքներ՝ առավելագույն արդյունքի հասնելու համար:

Հետևաբար, եթե անգամ վաղ նախազգուշացումը լիարժեքորեն կազմակերպված է, ինչպես նաև հաղթահարված է քաղաքական կամքի բացակայության մարտահրավերը՝ սա դեռ չի նշանակում, որ կանխարգելմանն ուղղված քայլերն արդյունավետ կլինեն: Միջոցների վերաբերյալ փոխըմբռնման ձևավորումը ևս կարող է խոչընդոտներ առաջացնել: Իսկ մշտապես նույն գործիքակազմի ընտրությունը տարբեր իրավիճակների համար չի երաշխավորում նույն արդյունքը: Հաշվի առնելով, որ գոյություն չունեն գարգացող հակամարտությունների համընդհանուր լուծումներ, հակամարտության կանխարգելման արդյունավետ ռազմավարության ձևավորումը պահանջում է հիմնական դերակատարների, հակամարտությունների շարժիչ ուժերի և հնարավոր մեղմացնող գործոնների, ինչպես նաև սրացման հնարավոր ազդակների կամ հնարավոր պահերի ավելի խորը վերլուծություն³¹: Հետևաբար յուրաքանչյուր դեպք ենթադրում է մի շարք գործոնների, հանգամանքների ուսումնասիրություն, վերլուծություն, ապա դրա հիման վրա առավել նպատակահարմար գործիքակազմի ընտրություն:

³¹ Նույն տեղում:

Գործիքակազմից ռազմավարությանն անցումը պահանջում է հասկանալ, թե³².

- դիվանագիտական (քաղաքական), տնտեսական (սոցիալական), իրավական (սահմանադրական) և ռազմական (անվտանգության) գործիքների ո՞ր համադրություններն են ամենաարդյունավետը տարբեր իրավիճակներում,
- ո՞ր հանգամանքներում են համատեղ կամ հարկադրանքի միջոցներն առավել արդյունավետ: Ինչպե՞ս պետք է սրանք կարգավորվեն (հաջորդեն իրար),
- ինչպե՞ս կարող են կառուցվածքային և գործառնական կանխարգելման ռազմավարությունները դառնալ փոխլրացնող,
- որքանո՞վ են բազմակողմ կանխարգելիչ ռազմավարություններն ավելի արդյունավետ, քան միակողմանի ռազմավարությունը:

Գործիքակազմի ընտրությունն ուսումնասիրելիս ակնհայտ է դառնում, որ կանխարգելման պատասխանատվության հաջողելու համար այս գործընթացում անհրաժեշտ է մի շարք հանգամանքների ուսումնասիրություն, ճիշտ ռազմավարության մշակում ու իրականացում: Կանխարգելման միջոցների կիրառման վայրի և ժամանակի ճիշտ ընտրությունն առանցքային նշանակություն ունի ինդրի կարգավորման տեսանկյունից, քանի որ եթե անգամ կանխարգելման համար գործիքակազմի հնարավորինս ամենաարդյունավետ տարբերակն է ընտրված՝ ժամանակի և վայրի սխալ ընտրությունը (ուշացած կամ տվյալ ժամանակահատվածում ոչ նպատակահարմար) կարող է հանգեցնել ավելի մեծ վնասների, քան գուցե և լինե՞ր առանց կանխարգելող միջոցառումների կիրառման: Այս համատեքստում պետք է որոշ մարտահրավերներ հաշվի առնել: Հավանական սցենար է, որ որևէ իրավասու դերակատար իրականում այլ նպատակներ հետապնդի (տարածաշրջանում ռազմական ներկայություն, ռեժիմի տապալում, և այլն):

³² Woocher L., նշվ. աշխ., էջ 11:

Առաջնորդվելով այդ թաքնված նպատակով՝ հնարավոր չէ բացառել միջամտող դերակատարի կողմից իր շահերին հասնելու համար առավել նպատակահարմար տարբերակի ընտրությունը: Ընդ որում, այդ ընտրությունը կարող է կատարվել՝ հաշվի առնելով միայն սեփական շահը: Այս դեպքում կստացվի իրավիճակ, երբ սխալ գործիքակազմի ընտրությունը նպաստավոր պայմաններ կստեղծի միջամտող կողմի համար այս փուլում «չհաջողելու» և արդեն հետագայում արձագանքման պատասխանատվություն իրականացնելու համար: Ստացվում է, որ կանխարգելման պատասխանատվությունը չհաջողեց՝ չնայած «կիրառված բոլոր ջանքերին», իրավիճակը տարածաշրջանում սրվեց և արձագանքման պատասխանատվության կիրառման անհրաժեշտություն առաջացավ: Այնինչ իրականում կանխարգելմանն ուղղված քայլերն՝ աննպատակահարմար գործիքակազմի ընտրությամբ պայմանավորված, դիտավորյալ տապալվել են, կամ կանխարգելումն իրականացող կողմն իսկապես անհրաժեշտ ջանքեր չի կիրառել այն իրականացնելու համար, քանի որ այլ նպատակներ է հետապնդել: Թեև պետք է նաև նշել, որ գործընթացը բարդ է, եթե գործընթացում ներգրավված կողմերը շատ են. անհրաժեշտ է գալ փոխհամաձայնության, ինչը բարդացնում է կամայական գործիքակազմի ընտրությունը և ստեղծված իրավիճակը սեփական նպատակներին ծառայեցնելը:

Հետևաբար, չնայած զեկուցով կանխարգելման պատասխանատվության առաջնային դերի ընդգծմանը, դրա արդյունավետ իրականացման համար վերոնշյալ առանձնահատկությունների թվարկմանը՝ գործնականում ընթացքը բարդ է, յուրահատուկ ռազմավարություն է պահանջում յուրաքանչյուր դեպքի համար և ապահովագրված չէ մարտահրավերներից ու պետություններին մանևրելու հնարավորությունից զերծ չի պահում:

Քաղաքական կամք: Ինչպես նախորդ երկու նախապայմանների ուսումնասիրության դեպքում ընդգծվեց՝ կանխարգելման պատասխանատվության արդյունավետությունը, ըստ էության, պայմանավորված է սպառնալիքների կանխարգելման համար անհրաժեշտ

գործողությունների իրականացման պատրաստակամությամբ, դրանք իրականացնելու քաղաքական կամքով: Իհարկե սա ամենևին չի նշանակում, որ քաղաքական կամքը բացառապես բխում է շահից կամ որ բացառապես շահերի առկայության դեպքում է ձևավորվում քաղաքական կամք: Բոլոր պետությունները, ստորագելով ՄԱԿ կանոնադրությունը, պարտավորվել են հարգել մարդու իրավունքներն ու ազատությունները, ուստի յուրաքանչյուրի գործունեության հիմքում նախ պետք է ընկած լինեն համամարդկային արժեքները: Ցանկացած միջամտության իրականացման դեպքում նախ և առաջ կարևոր է գնահատել դրա արդյունքը մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից³³: Որևէ միջամտող պետության շարժառիթ կարող է լինել նաև սեփական սահմանների ամրապնդումը, այդ տարածաշրջանում սփյուռքի առկայության դեպքում վերջինիս պաշտպանությունը...³⁴, իր սահմաններին հարող կամ իր հետ տնտեսական կապերով ունեցող տարածաշրջանում մշտական կայունության ապահովումը, հետևաբար՝ սպառնալիքների հնարավորինս շուտ հաղթահարումը ամենավաղ փուլում, բխում է ն՝ կանխարգելման իրավասություն ունեցող կողմի հետաքրքրություններից, և՛ մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունից: Հետևաբար տարածաշրջանում շահի առկայությունը միանշանակ միայն բացասական ազդեցություն չի կարող ունենալ, իսկ դրա բացակայությունը չի ենթադրում պարտադիր անգործություն:

Եզրակացություն

Պաշտպանելու պատասխանատվությամբ մարդասիրական միջամտության փոխարինումը, առավել հստակ մեխանիզմների ներմուծումը լիարժեքորեն չի հաղթահարում բոլոր մարտահրա-

³³ **Մուրադյան Լ.**, Մարդասիրական միջամտության իրականացման իրավական հիմքերն ու կիրառման խնդիրները, Հայկական Քաղաքագիտական Հանդես 1(9), 2018, 89-110:

³⁴ Նույն տեղում:

վերները: Չնայած ՊՊ գործընթացում կանխարգելման պատասխանատվության առաջնային դերին, դրան նվիրված ուսումնասիրությունները թերի են, խնդիրը չեն դիտարկում միաժամանակ երկու՝ իրավական և քաղաքական բաղադրիչների համադրմամբ, նկատելիորեն զիջում են մյուս երկու՝ և հատկապես արձագանքման պատասխանատվության վերաբերյալ ուսումնասիրություններին: Մինչդեռ ՊՊ կիրառման հնարավորությունների ու խոչընդոտների մասին ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է դիտարկել բոլոր 3 պատասխանատվությունները: Դրանցից որևէ մեկի թերի կամ միակողմանի ուսումնասիրությունը կարող է փոխել ամբողջ պատկերը: ԿՊ կիրառման հնարավորությունների և խնդիրների ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրակացնել.

- ՊՊ-ն, որպես երեք պատասխանատվությունների ամբողջություն, տեսականորեն հնարավորություն է ընձեռում միջազգային հանրությանը նախ կանխարգելել հնարավոր սպառնալիքները, ճգնաժամային իրավիճակները, դրանց խորացումը և, չհաջողելու դեպքում միայն անցնել արձագանքմանը ճգնաժամային իրավիճակին, ապա՝ առաջացած հետևանքների վերականգնմանը: Գործնականում, սակայն, կանխարգելման պատասխանատվության հաջողելու համար մշտապես լիարժեքորեն չեն կիրառվում հնարավոր բոլոր միջոցները՝ մինչև արձագանքման պատասխանատվությանն անցնելը, ՊՊ գործողությունները բացառապես մարդասիրական գործողությունների շրջանակում չեն իրականացվում: Եթե տեսականորեն ԿՊ շրջանակում պետք է կանխարգելման տարբերակները միջտ սպառված լինեն՝ նախքան արձագանքմանն անցնելը, ապա գործնականում հնարավոր է, որ անցում լինի արձագանքման պատասխանատվությանը՝ առանց ԿՊ լիարժեք իրականացման: Այս գործընթացի հաջողությունը կարող է պայմանավորված լինել տարածաշրջանում որևէ դերակատարի շահերի առկայությամբ կամ բացակայությամբ: Միջամտող կողմի շահագրգռվածության դեպքում հնարավոր է ստեղծված

իրավիճակն արհեստականորեն անլուծելի դարձնել կանխարգելման փուլում, որպեսզի արձագանքման պատասխանատվության (ընդհուպ մինչև ռազմական միջամտության) իրականացման անհրաժեշտություն առաջանա:

- Վաղ նախազգուշացման գործընթացում կարող են խոչընդոտներ լինել: Տեսականորեն, սպառնալիքների մասին վաղ նախազգուշացմամբ ամեն ինչ կարգավորված է այնպես, որ դրա օգնությամբ հնարավոր լինի դեռ վաղ փուլում նախազգուշացնել մի շարք մարտահրավերների, սպառնալիքների մասին: Մինչդեռ գործնականում գործընթացի արդյունավետությունը պայմանավորված չէ բացառապես համակարգված տեղեկությունների հասանելիությամբ: Անգամ համակարգված ինֆորմացիայի առկայության դեպքում պետք է չանտեսել դերակատարի տրամադրվածությունը: Վերջիններս՝ առաջնորդվելով տարածաշրջանում իրենց շահերով, հետաքրքրություններով, կարող են իրենց անգործությունն ուղղակի պատճառաբանել անհրաժեշտ ինֆորմացիային չտիրապետելով, դրա ոչ լիարժեք լինելով և մի շարք այլ հանգամանքներով:
- Կանխարգելող միջոցների գործիքակազմի ընտրության հարցում ևս խոչընդոտներ կան: Կանխարգելման համար առանձնացվող երեք նախապայմանները (վաղ նախազգուշացում, կանխարգելող գործիքակազմի ընտրություն, քաղաքական կամք) խիստ փոխկապակցված են, իսկ առաջին երկուսը մասամբ փուլային բնույթ ունեն: Ըստ էության, նախ պետք է լինի խնդրի մասին նախազգուշացում, ապա ստացած տեղեկությունների վերլուծության հիման վրա կանխարգելող գործիքակազմի ընտրություն: Առաջինում թերանալու դեպքում մեխանիկորեն սխալ ընթացք կստանա գործիքակազմի ընտրության գործընթացը: Այս գործընթացում ևս դերակատարները զրկված չեն մանևրելու հնարավորությունից: Տարբեր իրավիճակներում գործիքակազմի ընտրությունը կարող է պայմանավորված և

ուղղորդված լինել թիրախային տարածաշրջանում շահերի, հետաքրքրությունների առկայությամբ կամ բացակայությամբ:

- Կանխարգելման պատասխանատվությունը միայն տեսականորեն է ներկայացված որպես առաջնահերթություն, գործնականում այլ պատկեր է: Արդյունավետ լինելու համար անհրաժեշտ է մշակել մեխանիզմ, որը դերակատարներին հնարավորինս թույլ չի տա մանևրել ու սեփական շահերին ծառայեցնել որևէ տարածաշրջանում ստեղծված ճգնաժամային իրավիճակը: Հավանաբար այն պետք է ունենա պարտադիր ուժ:

The Responsibility to Prevent: Implementation Challenges and Opportunities

LILIT MURADYAN
Brusov State University

The international community has repeatedly faced gross violations of the rights of peoples: cases of mass atrocities, violence, ethnic cleansing, genocide. Numerous instances of humanitarian intervention to avoid such violations and challenges for international security have never been unequivocally acknowledged by the international community. The difference in approaches is due to the fact that the humanitarian intervention has always been considered in parallel with the principles of non-use of force, non-interference in the internal affairs of states, and sovereign equality of states. To overcome the obstacles, the report of the International Commission on Intervention and State Sovereignty (R2P) popularized a new concept of Responsibility to Protect as a set of three responsibilities: the responsibility to prevent, to react, and to rebuild. Despite the attempt to create a legal basis for up to the military intervention with the responsibility to protect, cases of interference in international relations pursuing other goals under the guise of protecting human rights reveal the incompleteness of the process and the shortcomings of the legal basis. The first pillar of the R2P, the responsibility to prevent, presupposes making all possible efforts to prevent the crisis at an early stage not to make a transition to the other stages of the R2P. While experience shows that states often fail at this stage. This is evidenced by non-decreasing manifestations of the above-mentioned violations, security threats, and conflicts. It allows assuming that the responsibility to prevent is not fully realized or does not always serve its purpose. The article explores the implementation opportunities and obstacles of the responsibility to prevent and its possible reasons.